

Վառազդադութիւնը նաւ շինել ու ղեկավարել :

Բայտափ բան սորվեցաւ մարդս . այս չափ բան կատարելագործեց գիտողութեամբ , տրամաբանութեամբ և փորձով : Եւ այս անսահման գիտութիւնը բացատրելու համար բաւական են իրեն 40⁶ չափ տառեր , երաժշտական եօթը խաղեր , և տասը համարողական նշանագիրներ :

Հիմա բաղդատէ այս մարդս ան եղէշոյն հետ երբոր աշխարհք մտաւ : Ուր են անասունները որ կ'արգահատէին իրեն : Վազանները տեղի տուին երկրիս թաղաւորին . և այն քիչն որ մնաց անտառներու մէջ , մարդս իր որսի զուարճութեանը համար կը պահէ . հնարեց ինքը հրացան և վարմ¹ թռչունները բռնելու . կարթ , արծոյլ և երեքարձէն՝ ձկներն որսալու : Ար տեսնէս այն սէգ և կրակոտ կենդանին որ իշխանական կերպով մը գլուխը կը տնկէ , կը ցնցէ բաշերը առողջ վզին վրայ , և ագւռն իր բարեչափ կողերը կը խարազանէ , ցատկըտելով կը թռչի մարգերէն՝ խոր խինջներովը լեցընելով հոն տեղուանք : Չին է ատիկայ . և մարդս նուաճեց զինքը , ու անով երկրէ երկիր կը վազէ : Սանձեց հեղեղները , կոտրեց անտառները , և լեռներուն գագաթներէն եղևինները ծովեզերք իջեցուց ու նաւեր շինեց երթալու գալու : Բնաւ քամիներուն . “Տարեք զիս աշխարհքիս ծայրը” . և հլու քամիներն իրենց թևերովը իրեն փափագած ափունքը ձգեցին զինքը : Բնաւ շողիին . “Տուր ինծի քուկին մեծ ուժդ , որ իմ թևերուս տեղը բռնէ” . և շողին հիանալի կերպով կատարեց մարդուս մտքին յղացածը : Բնաւ լեռներուն . “Բացուեցէք” . և անոնք իրենց ընդերքէն ընծայեցին իրեն քար և մետաղ : Բնաւ երկրիս . “Բնձիւղէ” . և երկիրս բուսուց ցորեն , վուշ , կանեփ , բամբակ , գինի , խնկեղէն , ներկ , գեղ , ձէթ , փայտ , թուղթ և ձիւթ : Սարդս աղբիւրներուն ջրերը իր պարտէզներուն մէջ խռ

խոջել տուաւ և գետերով դաշտերն ուռեցեց . հանգիստ բնակարաններ շինելով տեղաւորուեցաւ խաղաղ դաշտավայրներու կամ աղմկայոյզ քաղաքներու մէջ . հոն հաստատեց տէրութիւն և օրէնք՝ որ կ'ընկճէն ստահակները , դպրոցներ՝ որ գիտութիւն և առաքինութիւն կը սորվեցընեն , ապաստաններ՝ որ զթշուառները կը պահեն , զուարճութիւններ՝ աշխատութիւններէ սփոփուելու համար , եկեղեցիներ՝ Ետուծոյ ազօթելու և շնորհակալ ըլլալու որ այս չափ բարիք տուաւ մեզի առատութեք :

Սակայն այսու ամենայնիւ կրնայ մարդ ստեղծել կամ ոչնչացնել գոնէ աւաղի հատմը : Ետուած իրեն պահեց ստեղծելն ու եղծանելը :

Ուրեմն ինչ զարմանալի արարած է մարդս . այսչափ պզտիկ և այսչափ մեծ . քանի մը տարի կը տւէ և յաւիտենականութեան ետեւէ կ'ըլլայ . նեղ սահմանի մէջ փակուած , և մոքով բոլոր տիեզերքս կ'ընդգրկէ . ամէն չորս կողմի եղածներուն ներքոյ դրուած , և ամենայնի տէր :

Կը շարունակուի :

ԱԶԳԱՅԻՆ ՆԻԳ

Հոգի , մի ասեր զարիպ ,
Թէ չէ , իմ սիրտս կ'արունի .
Ղարիպն 'ի յօտար երկիր՝
Ղէմ , խիստ դիժար կու լինի :
Օ ինչ հաւն երամէն մոլորած
Ի՛նչ տեղ խկի չի հանգչի .
Բայնչափ երերուն կենայ
Սինչ իւր երամն հասանի :
Ղարիպ սիրտդ մի նեղեր ,
Բայ դիժար օրերս անցնի .
Շատ զարիպ 'ի տուն դարձաւ ,
Սի՛ վախեր թէ քեզ չլինի :
Օ Աստուած ողորմած կ'ասեն ,
Ողորմի ամէն զարիպի ,
Վեզ այլ օգնական լինի
Որ հասնիս սըրտիդ մուրատի :

Հոգի, գէմ դու լաս, կ'ասես,
 Սիրտս է սեւ քան ըզգործելի.
 Ի զարիպութեան տերտէն
 Երեսիս գունը կը քաղուի:
 Յորժամ ես 'ի միտ ածեմ,
 Օ իմ եղբարքն եւ զիմ սիրելիք՝
 Հոգիս բերանիս կ'առնու,
 Քակելոյ ճարակ մի չունի:
 Դարիպ, զասայ մի աներ,
 Դասայէն մարդըն չիշահեր.
 Շատ մանուկ զասայ կ'անէ,
 Ի շահին տեղն է ինք չէնէր:
 Դասան շատոնց ցաւ կու տայ,
 Ի ցաւէն մարդըն մեռանի.
 Օ ինչ սիրտն որ հասրաթ ունի
 Ի մէնէն մահրում կու լինի:

Բանգ զղարիպն ասեմ,
 Որ յօտար յերկիր հանդիպի.
 Բշերն արտասուք 'ի լի
 Ի յերեսն 'ի վայր կու թափի:
 Յորժամ 'ի մէջիս նըստի,
 Յանկարծ սրբտիկն արիւնի.
 Օ աչերն 'ի բոլոր ածէ,
 Կարեւոր ոչ ոք նա չունի:
 Ի մէնքս եմք զարիպ, եղբարք,
 Հայրենի մարդ իսկի չունինք.
 Հաւասար գնալու եմք մեք,
 Օ ի այն կեանքն է մեզ հայրենի:
 Ի ստէնս քեզ ճար արա,
 Որ անտէն հոգիդ չի տանջի.
 Օ սուրբքն 'ի քեզ եղբարք շինէ,
 Ու զհրեշտակք արա սիրելի:

Պատկառուի :

Բզպատկառուին իսկ ամօթխած սընտ խնամով 'ի ծաղկոցիդ,
 Ի նախանձ ըզգաստութեան մըշակուհիդ ծաղկատարփիկ.
 Հազիւ մատին հուպ 'ի մանրիկ լեալ տերեւիկս, յինքն ամփոփի:
 Ոչ ըզգացումն 'ի նմա կարծեմ կենդանական ազդեալ 'ի բնէ,
 Եւ պատկեր և եթ նորին զարմանահրաշ տըպաւորեալ:

ՎԵՐԻՐԻ ՈՐՄՁԻՄՆԱՅ, ԳԻՐԲ Գ. 288-292

Տնկոց մէջ մասնաւոր յատկութիւն
 ունեցողներէն մէկն ալ է պատկառու-
 կը, որ երբ օտար առարկայ մը իրեն
 դպչի՝ մէկէն կ'ամփոփուի: Շատ տե-
 սակ կը բաժնուի պատկառուկը, բայց
 սովորականն է հասարակ պաշտօն-
 սուածը՝ որուն թէպէտ արմատը պզտիկ
 է՝ բայց շատ ճիւղեր կ'արձրկէ կապոյտ
 կամ ծիրանեգոյն և բրդոտ, գրեթէ
 ինչուան մէկ ու կէս ոտք երկայնութիւն,
 որոնք ընդհանրապէս դէպ 'ի գետին
 խոնարհած կ'ըլլան, երկայն, ողորկ ու
 նեղ տերեւներով՝ որ երկու կողմանէ
 կանոնաւոր ոճով մը շարուած են, և
 մէկէն ձեռք դպածին պէս իրարու կը
 մօտիկնան, անանկ՝ իբրեւ թէ զգաց-

մունք ունենային: Տերեւներուն սկիզ-
 բէն, այսինքն ճիւղին հետ միացած մա-
 սէն՝ ծաղիկներու փունջ մը կ'աճի
 բաժակաւոր կամ պզտիկ հաւերթածե-
 գլուխներով, ճերմակագոյն կամ թե-
 թե մը մսագոյն. իւրաքանչիւրը չորս
 առէջք ունին. աս ծաղիկներուն կը յա-
 ջորդեն տասուերկուքէն ինչուան տաս-
 նըհինգը մէկէն փշապատ և տափակ
 պճեղներ, չորս կամ հինգ գծաչափ եր-
 կայն, մէկ ու կէս գծաչափ լայն՝ որոնք
 իրեք պզտի հունտեր կը բովանդակեն:
 Իստ ոմանց եթէ պատկառուկին տե-
 րեւները ծամուին՝ հիւթ կը զրգուեն և
 կը չափաւորեն հազը, և խարանի գոր-
 ծածուելով երիկամանց ցաւերը կը մեղ-